«ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՆԴԵՍԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

2015 թ. ապրիլի 20-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային հանդեսի (www.fundamentalarmenology.am) առաջին համարի շնորհանդեսը:

«Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային հանդեսի նպատակն է. Հայոց ամբողջական քաղաքակրթական արժեհամակարգի հիման վրա, Հայոց պատմության, բանասիրության, հնագիտության, ազգագրության, ժողովրդագրության, տնտեսագիտության, փիլիսոփայության, իրավունքի, քաղաքագիտության, կառավարման, արվեստի և արևելագիտության՝ հայագիտության համար հիմնարար նշանակություն ունեցող հարցերի վերհանումը, պարզաբանումը և ուսումնասիրությունը: Հանդեսն անգլալեզու է, և համացանցով տարածումը հնարավորություն կտա այն հասանելի դարձնել ընթերցող լայն շրջանակներին՝ տարբեր աշխարհամասերում:

Հանդեսի աշխատանքները հովանավորվել են Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող «Համահայկական հիմնադրամի» կողմից: Նրա հիմնական նպատակներից է՝ հայագիտության զարգացման խթանումը, որը համարվում է ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

«Հիմնարար հայագիտություն» հանդեսի առաջին համարը բաղկացած է հետևյալ բաժիններից. պատմություն, պատմական քարտեզագրություն, հնագիտություն, փիլիսոփայություն և իրավունք, ազգագրություն և կառավարում, քաղաքագիտություն և տեղեկատվական անվտանգություն, արվեստ, բանասիրություն, Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթեր, գրքեր ու գրքերի գրախոսություններ:

Առաջին համարը նվիրված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Հանդեսում մեծ թվով հոդվածներ, նյութեր և փաստաթղթեր են տեղադրվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ,

որոնցում բազմակողմ անդրադարձ է կատարվում հիմնարար խնդիրներին: Այստեղ ներկայացվել են՝ Հայոց ցեղասպանության հարյուրամյակի համահայկական հռչակագրի, ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի Հռոմի պապ Ֆրանցիսկոս I-ի՝ Վատիկանի Սբ. Պետրոս տաճարում մատուցած պատարագի, Հայոց ցեղասպանության 1.5 միլիոն հայ նահատակների՝ Հայ Առաքելական եկեղեցու կողմից ապրիլի 23-ին սրբադասման արարողակարգի, Հայոց ցեղասպանության ապրիլի 24-ի պաշտոնական ծիսակատարության, ինչպես նաև ցեղասպանության եզրույթը գործածության մեջ դնող և այդ հանցագործությունը կանխելու ու դրա համար պատժի մասին կոնվենցիայի ընդունման գործում անուրանալի դեր ունեցած Ռաֆայել Լեմկինի հարցազրույցի (որտեղ նա նշում է, որ եզրույթը ստեղծելիս հիմք է ընդունել Հայոց ցեղասպանությունը) տեսանյութերը:

Հանդեսի անդրանիկ համարում զետեղվել են նաև Հայոց հին և միջնադարյան պատմությանը, հնագիտությանը և քարտեզագրությանը, փիլիսոփայությանն ու իրավունքին, տեղեկատվական անվտանգությանը և այլ հարցերին վերաբերող նյութեր:

Հանդեսի խմբագրական խորհրդի անդամներն են Հայաստանում և արտերկրում հայտնի գիտնականներ՝ պատմագիտության դոկտոր Էդուարդ Դանիելյանը (գլխավոր խմբագիր), ակադեմիկոսներ՝ Աշոտ Մելքոնյանը, Ռուբեն Սաֆրաստյանը, Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը, ակադեմիկոս Գեորգ Բրուտյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ավետիք Իսահակյանը, պրոֆեսոր Ջոն Մեյսոնը (ԱՄՆ), պ. գ. թ. Ռոբերտ Ղազարյանը (պատասխանատու քարտուղար):

Հանդեսի և համապատասխան կայքէջի տեխնիկական սպասարկող և ծրագրային համակարգողն է Տիգրան Ապիկյանը, թարգմանիչը՝ Սյուզաննա Չրաղյանը:

Խմբագրական խորհրդի նպատակն է հայագիտության մեջ կատարված և ներկայումս շարունակվող հիմնարար հետազոտությունները ներկայացնել լայն հասարակայնությանը:

ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ